



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10- 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

01.12.2022թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքներին ներկա են ավագանու 26 անդամները, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ.Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Ս.Բալաբեկյանը, Գ.Աֆյանը, գյուղերի վարչական ղեկավարները:

Բացակայում է Նորիկ Վարդանյանը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 1 նիստի օրակարգը.

1. Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին:
4. Չարենցավան համայնքի Կոտայք 7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծման առաջադրանքը հաստատելու մասին:
5. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2-րդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին:

/Ձեկ Ս.Մուրադյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, **առաջարկում եմ**՝ ընդունել Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26

դեմ - 0

ձեռնպահ -0

Լսեցին.

2. Չարենցավան համայնքի ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին:

/Ձեկ Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 66-րդ հոդվածով և հիմք ընդունելով թիվ 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 02-ի N 11-Ա որոշումը, **առաջարկում եմ**՝ ստեղծել Չարենցավան համայնքի ավագանու հետևյալ խմբակցությունները.

- | | |
|--|----------|
| 1) «Միասնական համայնք դաշինք» խմբակցություն- | 14 անդամ |
| 2) «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն- | 11 անդամ |
| 3) «Ապրելու երկիր» խմբակցություն- | 2 անդամ |

Ի գիտություն ընդունել համայնքի ավագանու խմբակցությունների ներկայացրած կազմը, խմբակցությունների ղեկավարների և քարտուղարների անուն ազգանունները, կանոնադրությունները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավան համայնքի՝ ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին:

/Զեկ Ս.Մուրադյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ ընդունված ավագանու կանոնակարգը, առաջարկում եմ՝ ստեղծել Չարենցավան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ և հաստատել դրանց կազմերը՝ համաձայն հավելված N 1-ի:

2022 թվականի դեկտեմբերի 02-ին՝ համաձայն հավելված N 2-ի, հրավիրել մշտական հանձնաժողովների առաջին նիստերը, ընտրել նախագահ և քարտուղար:

Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 15-ի «Համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով ստեղծելու և նրա կազմը հաստատելու մասին» N 14 և Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ի «Չարենցավան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին» N 40 որոշումները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավան համայնքի Կոտայք 7 միկրոռեզիդենս մակարդակի համակցված փարածական պլանավորման փաստաթղթերի նախագծման առաջադրանքը հաստատելու մասին:

/Զեկ Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064 –Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 4/Ա-7 եզրակացությունը **առաջարկում եմ**.

Հաստատել Չարենցավան համայնքի Կոտայք 7 միկրոոեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծման առաջադրանքը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-26

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2-րդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

/Ձեկ.Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով **առաջարկում եմ**.

Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2-րդ նիստի օր և ժամը սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 26-ը, ժամը 12:00:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-26

դեմ-0

ծեռնպահ-0

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ
Բայան Աննա
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գասպարյան Մելիք
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Եփրեմյան Տարոն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Խեչոյան Անահիտ
Խլղաթյան Արսեն
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մակինյան Վարդան
Շահգալոյան Հակոբ
Սահակյան Գառնիկ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ
Պալյան Գարիկ
Պապոյան Դավիթ
Պողոսյան Մնացական

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՇԱՀԳԱԼՂՅԱՆ